ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16 փետրվարի 2024թ. **ք.Երևան**

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Երեմ Եսոյանս /այսուհետ՝ դատարան/, ծանոթանալով <<Վայթ քոմունիքեյշն>> ՍՊ ընկերության ընդդեմ <<Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ դատական դեպարտամենտ>> ՊՄ-ի՝ դատական դեպարտամենտի և <<Վայթ քոմունիքեյշն>> ՍՊ ընկերության միջև 12.07.2023 թվականին կնքված <<Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման>> թիվ <<ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19-1>> ծածկագրով պայմանագրի 29.12.2023թ.-ի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումին.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<<Վայթ քոմունիքեյշն>> ՍՊ ընկերության տնօրեն Արա Յավրումյանը 2024թ. հունվարի 29-ին փոստային ծառայության միջոցով հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ ՀՀ դատական դեպարտամենտի՝ դատական դեպարտամենտի և <<Վայթ քոմունիքեյշն>> ՍՊ ընկերության միջև 12.07.2023 թվականին կնքված <<Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման>> թիվ <<ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19-1>> ծածկագրով պայմանագրի 29.12.2023թ.-ի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը դատարան է ստացվել 2024թ. հունվարի 31-ին:

Հայցադիմումը ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Երեմ Եսոյանի աշխատակազմին է հանձնվել 2024թ. փետրվարի 01-ին:

2024թ. փետրվարի 06-ի դատարանի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

2024թ. փետրվարի 06-ի հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ նշված թերությունները վերացնելուց հետո <<Վայթ քոմունիքեյշն>> ՍՊ ընկերության տնօրեն Արա Յավրումյանը 2024թ. փետրվարի 09-ին փոստային ծառայության միջոցով հայցադիմումը կրկին է ներկայացրել դատարան, որը դատարան է ստացվել 2024թ. փետրվարի 12-ին:

Հայցադիմումը ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Երեմ Եսոյանի աշխատակազմին է հանձնվել 2024թ. փետրվարի 13-ին:

2024թ. փետրվարի 06-ի հայցադիմումը վերադաձնելու մասին դատարանի որոշմամբ նշված թերությունները վերացված են, հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122 հոդվածների պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-125, 199-200 և 361 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. <<Վայթ քոմունիքեյշն>> ՍՊ ընկերության ընդդեմ <<Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ դատական դեպարտամենտ>> ՊՄ-ի՝ դատական դեպարտամենտի և <<Վայթ քոմունիքեյշն>> ՍՊ ընկերության միջև 12.07.2023 թվականին կնքված <<Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման>> թիվ <<ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19-1>> ծածկագրով պայմանագրի 29.12.2023թ.-ի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ **ԵՐԵՄ ԵՍՈՅԱՆ**